ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ. (010) 778-122

թիվ 96/7-5 «12» 01 2026 թ.

Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյանին

Հարգելի՛ պարոն Ղազինյան.

Ուղարկվում է Հասմիկ Արմենի Լեյլոյանի՝ «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

Կից՝ կարծիքը՝ «4» թերթից (2 օրինակով) և ատենախոսությունը:

Հարգանքով՝

Ռեկտոր,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ ***Մ. Մուրադյան***

Կատարող՝ Ա. Սաֆարյան (093577589)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր
_____ Մ. Մուրադյան
«28» 01 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Հասմիկ Արմենի Լեյլոյանի՝ «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Յու. Թադևոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի և Ա. Գ. Սաֆարյանի քննարկեց Հասմիկ Արմենի Լեյլոյանի՝ «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Փիլիսոփայության և իրավագիտության փոխհարաբերությունը բազմաշերտ է և չի կարող դրսևորվել միայն մեկ հարթության վրա: Ընդ որում, իրավագիտության կատեգորիաները ընդգրկում են միայն վերջինիս առարկայական տիրույթին վերաբերող հասկացություններ, իսկ փիլիսոփայական կատեգորիաները համապարփակ ընդգրկում ունեն գոյաբանական, մեթոդաբանական և իմացաբանական միասնականության համատեքստում: Իրավունքի փիլիսոփայությունը հասարակության իրավական կյանքի այնպիսի

օրինաչափությունների բացահայտում է, որոնց միջոցով հաջողությամբ կարող են լուծվել իրավական խնդիրները: Այս համատեքստում, հաշվի առնելով «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փիլիսոփայական բովանդակությունը և դիալեկտիկական փոխհարաբերության հիմնական առումներն իրավունքում, հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված հայրենական օրենսդրության մեջ և դրանից դուրս ձևական սահմանում չստացած իրավական հնարավորությունների և դրանց առանձին տեսակների բացահայտմանը, ինչպես նաև հնարավորության բովանդակության կենսագործման կամ նյութականացման փիլիսոփայական հիմքերի, պայմանների, վերջիններիս իրավական իրականության վերածման գործընթացի խթանման որոշ լծակների գործնական մատնանշմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ինը ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են ատենախոսության հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, թեմայի գիտական մշակվածության աստիճանը, տեսական, իրավական կամ փորձառական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ««Հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական կատեգորիաների հասկացողության և փոխհարաբերության իրավաբանական հայեցակարգը» վերտառությամբ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փիլիսոփայական բովանդակությունը, կոնկրետացումն իրավունքի համատեքստում, ինչպես նաև վերջիններիս դիալեկտիկական փոխհարաբերության հիմնական առումներն իրավունքում:

Ատենախոսության երկրորդ՝ «Իրավական հնարավորությունների դասակարգումը և առանձին տեսակների տեսաիրավական վերլուծությունը» վերտառությամբ գլխում հեղինակը նախ ներկայացրել է իրավական հնարավորությունների տեսակները և դրանց բովանդակությունը, իրավասուբյեկտությունը որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն, ապա անդրադարձել և վերլուծության է ենթարկել իրավական և ձևական հնարավորությունները սահմանադրաիրավական նորմերում:

Ատենախոսության երրորդ՝ «Իրավունքի կենսագործումը որպես հնարավորությունից իրականություն վերածման գործընթաց և պայմանավորվածությունն իրավահասկացողությամբ» վերտառությամբ գլխում

հեղինակը ներկայացրել և վերլուծել է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը, պայմանները և իրավունքի կենսագործումը իրավահասկացողության հիմնական տիպերի համայնապատկերում, անդրադարձել իրավական օրենքի (կամ դրական իրավունքի) որպես իրավական հնարավորության կենսագործման որոշ հիմնահարցերի:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթում ներառված ձևակերպումը, որտեղ հեղինակը նշում է, որ իրավասուբյեկտությունն իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն (ունակություն) է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Մեր կարծիքով առաջարկվող դրույթի շրջանակներում «իրավունքի սուբյեկտ» եզրույթը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ հաշվի առնելով թե իրավունքի տեսության դասական մոտեցումները, թե ժամանակակից կյանքում արհեստական բանականության համատեքստում «էլեկտրոնային անձի» դերակատարությունը, վերջինիս հնարավորությունը և դրանից բխող հետևանքները:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող տասներկուերորդ դրույթը: Վերջինիս շրջանակներում հեղինակը ուշադրություն է հրավիրում այն տեսակետին, որ իրավական օրենքը (կամ դրական իրավունքը) որևէ դեպքում չի կարող հնարավորությունից վերածվել իրականության և կենսագործվել իրավահարբերությունից դուրս: Հարկ է նկատել, որ թվարկած հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել ատենախոսության «Եզրակացություն» բաժնում:

3. Մասամբ թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես՝ գրականության ցանկում ընդհանուր առմամբ բացակայում են նշված աղբյուրների հղումների համարակալման և դրանց էջերի տեղադիրի, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:

Հետևություն. Հասմիկ Արմենի Լեյլոյանի՝ «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի

Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Հասմիկ Արմենի Լեյլոյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Հասմիկ Արմենի Լեյլոյանի՝ «Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումները» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2026 թ. հունվարի 8-ի նիստում, արձանագրություն թիվ 8 :

Ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր Ա. Է. Սուքիասյան